



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ԻՐԱՆԱՅԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Լոս Անճելըսի Իրանահայ Միութեան վարչութեան ներկայացուցիչները Ազգ. Առաջնորդարան այցելեցին Երեքշաբթի, 17 Օգոստոսի երեկոյեան, ծանօթացման հանդիպում մը ունենալու համար Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հետ: Պատուիրակութիւնը կը գլխաւորէր վարչութեան ատենապետուհին՝ Տիկին Պերճուհի Ղեւեան, որուն կ'ընկերանային վարչութեան անդամներ՝ Բելլա Սարգսեան, Արքէ Յարութիւնեան, Ռոստոմ Թորոսեան, Թովիկ Ալեքսանեան եւ Վրէժ Գրիգորեան: Ներկայ եղան Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հովիւներէն՝ Արժ. Տ. Կոմիտաս Զինյ. Թորոսեան, Ազգային Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան եւ անդամներ՝ Տեառք Լեւոն Կիրակոսեան ու Կարօ Էշկիեան, ինչպէս նաեւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ ազգային երեսփոխաններէն Տիար Իսահակ Գազանճեան:

Փոխադարձ ծանօթացումէ ետք, Առաջնորդ Սրբազանը ողջունեց վարչականներուն ներկայութիւնը Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ, որուն հետ Իրանահայ Միութեան կապերը միշտ ալ եղած են սերտ: Ան մաղթեց, որ յառաջիկային եւս, գործակցութիւնը շարունակուի աւելի սերտ կերպով:

Հիւր ներկայացուցիչները ընդհանուր գիծերու մէջ Առաջնորդ Սրբազանին ներկայացուցին իրենց աշխատանքի դաշտերն ու անմիջական ծրագիրները: Անոնք նաեւ յայտնեցին, թէ միութեան նորակերտ կեդրոնին շինարարական աշխատանքները կը մօտենան իրենց աւարտին, եւ փափաք յայտնեցին, որ Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. վարչութեան անդամներ այցելեն նոր շէնքը:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Իրանահայ Միութեան գործունեութիւնը, մանաւանդ հայկական աւանդներուն հաւատարմութիւնն ու հայկական արժէքներու պահպանման նախանձախնդրութիւնը, եւ բարի երթ մաղթեց վարչութեան եւ գործակիցներուն: Ան նաեւ յուշանուէրներ յանձնեց հիւրերուն:

## **PRELATE WELCOMES REPRESENTATIVES OF THE ARMENIAN SOCIETY OF LOS ANGELES**

On Tuesday, August 17<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives of the Armenian Society of Los Angeles. The delegation was led by Board of Directors Chair Mrs. Berjouhi Ghevian, accompanied by members Bella Sarkissian, Arke Haroutunian, Rostom Torossian, Tomik Alexanian, and Vrej Krikorian.

Joining the Prelate at the meeting were Pastor of St. Mary's Church Rev. Fr. Gomidas Torossian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian, Executive Council members Mr. Garo Eshgian and Mr. Levon Kirakosian, and St. Mary's Church Delegate Mr. Isahak Kazangian.

The Prelate welcomed the guests, noting that the Armenian Society of Los Angeles has a long history of collaboration with the Prelacy and expressing confidence that the close relationship will continue for years to come.

The guests presented the Prelate with an overview of their planned future activities, among them the construction of their new center which is nearly completion, and expressed their wish for the Prelate and Executive Council to visit the center.

The Prelate commended the mission of the organization to preserve and develop the Armenian culture and traditions and to serve the Armenian people and nation. He wished the members success in their endeavors and presented them with mementos at the conclusion of the meeting.